Հասցեատեր՝

«Նոա ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ noahfcarm@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16.11.2023թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նարեկ Ադամյան
	Արփի Լազարյան
	Դավիթ Բակլաչյան

Վարույթ՝	ՊԼ-078
Խախտում՝	1. «Նոա» թիմի գլխավոր մարզիչ Կարլոս Հերնանդեզ Ինարեխոսի (52416) անվայել վարքագծի և ոչ սպորտային պահվածքի դրսևորումը (Հավելված 1 Ա, 31-րդ կետ) 2. «Նոա» թիմի երկրպագուներից կողմից խաղի ժամանակահատվածում կարգ ու կանոն չապահովելը, երկրպագուների անհարգալից արարքներ թույլ տալը (Հավելված 1 Ա, 21-րդ կետ) 3. Երկու հեռուստաօպերատորների տարբերիչ գույներով ժիլետներ չկրելը (Հավելված 1 Ա, 76-րդ կետ)
Առաջնություն՝	2023-2024 IDBank Պրեմիեր Լիգա
Խաղ՝	«Նոա» - «Արարատ-Արմենիա», 07.11.2023թ. (1:0)

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Նոա» թիմի գլխավոր մարզիչ Կարլոս Հերնանդեզ Ինարեխոսին (52416) զրկել ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից 2 (երկու) խաղով և տուգանել «Նոա ՖԱ» ՀԿ-ին նվազագույն

աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200,000 ՀՀ դրամի չափով: Որակազրկումը տարածվում է սկսած 16.11.2023թ.-ից:

2. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը և 22-րդ հոդվածի 1-ին կետը՝ տուգանել «Նոա ՖԱ» ՀԿ-ին նվազագույն աշխատավարձի մեկհարյուրապատիկի՝ 100,000 ՀՀ դրամի չափով:
3. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ չկիրառել որևէ պատասխանատվության միջոց:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:

- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: